

« Բանկային համակարգի 2010-ի առաջին եռամսյակի գործունեության ամփոփում

Վերջին երկու եռամսյակների արդյունքները ցույց են տալիս, որ բանկային համակարգն աստիճանաբար հաղթահարում է համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքները և թևակոխել է առաջընթացի փուլ: 2010 թ-ի առաջին եռամսյակի ընթացքում բանկային համակարգը գործել է բնականոն հունով՝ ապահովելով գրեթե բոլոր հիմնական ցուցանիշների գծով համեմատական բարձր աճ: Բնականոն ընթացք է ստացել ֆիզիկական անձանց վարկավորման գործընթացը, աճել մատուցվող ծառայությունների ծավալը, ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների ծավալը, ինչպես նաև նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ ապահովվել է մաքուր շահույթի զգալի աճ:


Ընդհանուր ակտիվներ

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2010 թ-ի առաջին եռամսյակի ընթացքում աճել են 5.4 %-ով կամ 72.1 մլրդ դրամով և եռամսյակի վերջին կազմել 1,418.2 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ակտիվներն ավելացել էին 10.2 %-ով կամ 105.2 մլրդ դրամով, որը պայմանավորված էր նաև դրամի նկատմամբ դոլարի փոխարժեքի կտրուկ բարձրացմամբ: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում ակտիվներն ավելացել էին մոտ 79.7 մլրդ դրամով կամ 6.3 %-ով:

Վարկային ներդրումներ


Հաշվետու եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 6.7 %-ով կամ 52.4 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 6.6 %-ով կամ 6.2 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել համապատասխանաբար 830.6 և 87.0 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա չորրորդ եռամսյակի ընթացքում վարկային ներդրումներն աճել էին 7.7 %-ով կամ 55.8 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 9.0 %-ով կամ 7.7 մլրդ դրամով: Վերոնշյալին նաև հավելենք, որ նախորդ տարվա առաջին եռամսյակում վարկային ներդրումներն աճել էին 4.6 %-ով կամ 29.4 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 4.2 %-ով կամ 3.3 մլրդ դրամով: 2010 թ.-ի մարտի 31-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 58.6 %-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 62.4 %-ը կամ 518.2 մլրդ դրամ, և այս ցուցանիշն առաջին եռամսյակի ընթացքում աճել է 10.7 %-ով կամ 49.9 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 18.7 %-ի կամ 62.6 մլրդ դրամի դիմաց: Շարադրվածին միայն ավելացնենք, որ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում տնտեսությանը տրված վարկերն ավելացել էին 1.4 %-ով կամ 6.5 մլրդ դրամով:

2010 թ.-ի մարտի 31-ի դրությամբ
վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ դրամ)



Ֆիզիկական անձանց տրված վարկերը 2010 թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում աճել են 4.4 %-ով կամ 11.7 մլրդ դրամով և եռամսյակի վերջին կազմել 275.9 մլրդ դրամ, ընդ որում՝ նախորդ տարվա չորրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց տրված վարկերի աճը կազմել էր 14.1 % կամ 32.5 մլրդ դրամ: Համադրելու համար նաև նշենք, որ անցած տարվա առաջին եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը նվազել էր 12.8 %-ով կամ 38.2 մլրդ դրամով: Հաշվետու եռամսյակի վերջում ֆիզիկական անձանց վարկերի ծավալը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 33.2 %-ը, որի կառուցվածքում սպառողական վարկերը կազմել են 23.1 %-ը կամ 191.5 մլրդ դրամ, իսկ հիփոթեքային վարկերը՝ 10.7 %-ը կամ 88.8 մլրդ


դրամ: Հաշվետու եռամսյակի ընթացքում սպառողական վարկերի ծավալն աճել է 5.1 %-ով կամ 9.2 մլրդ դրամով, հիփոթեքային վարկերինը՝ 4.4 %-ով կամ 3.8 մլրդ դրամով, ընդ որում՝ անցած տարվա չորրորդ եռամսյակում նշված ցուցանիշների համապատասխան աճերը կազմել էին 0.9 % կամ 1.5 մլրդ դրամ և 1.7 % կամ 1.4 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ սպառողական և հիփոթեքային վարկերի գծով արձանագրված աճերի դինամիկան հիմք է տալիս ակնկալելու, որ առաջիկայում ևս բանկային համակարգում կապահովվեն վերոնշյալ վարկատեսակների գծով համեմատաբար ավելի բարձր ցուցանիշներ:



Պարտավորություններ

2010 թ.-ի մարտի 31-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 1,122.3 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 25.0 %-ով կամ 224.7 մլրդ դրամով, որը պայմանավորված է նաև արտարժույթային պարտավորությունների վերագնահատման դրական արդյունքով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու եռամսյակում աճել է 5.9 %-ով կամ 63.0 մլրդ դրամով, իսկ անցած տարվա չորրորդ եռամսյակում՝ 6.0 %-ով կամ 59.7 մլրդ դրամով: Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) հաշվետու եռամսյակի ընթացքում աճել են 6.9 %-ով կամ 23.4 մլրդ դրամով, իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 7.9 %-ով կամ 29.1 մլրդ դրամով և եռամսյակի վերջին համապատասխանաբար կազմել 362.9 և 396.0 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների եռամսյակային աճը կազմել է 8.5 % կամ 21.3 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդներինը՝ 1.1 % կամ մոտ 2.0 մլրդ դրամ: Տեղին է նշել, որ վերը նշված ցուցանիշների աճ էր գրանցվել նաև նախորդ տարվա չորրորդ եռամսյակի ընթացքում. այսպես, ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) աճել էին 1.9 %-ով կամ 6.2 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները 2.9 %-ով կամ 7.0 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 24.8 %-ով կամ 72.8 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 34.0 %-ով կամ 46.5 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա առաջին եռամսյակում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն աճել էին 14.3 %-ով կամ 33.5 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 18.8 %-ով կամ 32.2 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 24.4 %-ով կամ 53.7 մլրդ դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 31.5 %-ով կամ 28.1 մլրդ դրամով: Ասվածին միայն ավելացնենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց համախառն ավանդների) ծավալը հաշվետու եռամսյակի վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 67.6 %-ը:


Համակարգի ցպահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը
2010 թ.-ի մարտի 31-ի դրությամբ (մլրդ դրամ)




- Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ
- Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ
- Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ
- Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ

Համակարգում ժամկետային ավանդների
փոփոխման դինամիկան


Մլրդ դրամ





Ընդհանուր կապիտալ

«Հ բանկերի ընդհանուր կապիտալը հաշվետու եռամսյակի ընթացքում աճել է 3.2 %-ով կամ 9.1 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 295.9 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է կանոնադրական կապիտալի ավելացման հաշվին, ընդ որում՝ ընդհանուր կապիտալը չորրորդ եռամսյակում ավելացել է 7.5 %-ով կամ 20.0 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցում ավելացել էր 2.3 %-ով կամ 5.4 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից չբաշխված շահույթի (եկամուտների պահուստը) ցուցանիշը հաշվետու եռամսյակում նվազել է 2.6 %-ով կամ 2.4 մլրդ դրամով և եռամսյակի վերջին կազմել մոտ 88.0 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 29.7 %-ը, ընդ որում՝ նախորդ տարվա առաջին եռամսյակում վերոնշյալ ցուցանիշը նվազել էր 25.4 %-ով կամ 24.4 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝ կանոնադրական կապիտալը, ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ընթացքում աճել է 2.2 %-ով կամ մոտ 4.2 մլրդ դրամով և եռամսյակի վերջին կազմել 192.8 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 65.2 %-ը: Հարկ է նշել, որ կանոնադրական կապիտալի աճ էր գրանցվել նաև նախորդ տարվա չորրորդ եռամսյակում և այն կազմել է 4.9 % կամ 8.7 մլրդ դրամ: Միևնույն ժամանակ արձանագրենք, որ նախորդ տարվա առաջին եռամսյակի ընթացքում կանոնադրական կապիտալն ավելացել էր 2.0 %-ով կամ 3.0 մլրդ դրամով:



Եկամուտներ եվ ծախսեր

Ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ընթացքում բանկերի ընդհանուր եկամուտները կազմել են 51.1 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 42.7 մլրդ դրամ, ընդ որում՝ անցած տարվա առաջին եռամսյակի ընդհանուր եկամուտները կազմել էին 48.1 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 45.8 մլրդ դրամ: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում համակարգում ապահովվել էր 1.5 մլրդ դրամի ավել եկամուտ և կատարվել էր 1.9 մլրդ դրամի պակաս ծախս, քան հաշվետու եռամսյակում:


Հահույթ

ՀՀ բանկային համակարգում հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովվել է 6.77 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը 2009 թ.-ի նույն ժամանակամիջոցում ապահոված մաքուր շահույթի ծավալին գերազանցել է 5.66 մլրդ դրամով: Ասվածին միայն ավելացնենք, որ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում համակարգում ապահովվել էր 8.3 մլրդ դրամի մաքուր շահույթ:

Անփոփ ցուցանիշներ

2010 թ.-ի առաջին եռամսյակի արդյունքներով բանկերի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը, մարտի 31-ի դրությամբ կազմել է 2.42 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը, նույն ժամկետի դրությամբ կազմել է 0.5 %: Պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել կապիտալի եկամտաբերության, ինչպես նաև ակտիվների շահութաբերության աճ անցած տարվա նույն ժամկետի համեմատ՝ ROE-ն աճել է 1.96 տոկոսային կետով, իսկ ROA-ն՝ 0.4 տոկոսային կետով:

ՀՀ բանկային համակարգի անփոփ ցուցանիշները



2010 թ.-ի մարտի 31-ի դրությամբ հիմնական ցուցանիշներն՝ ըստ բանկերի,
դրանց աճը/նվազումն առաջին եռամսյակի ընթացքում և բանկերի գրաված տեղը համակարգում

Աղյուսակ 1.
(մլն դրամ)

Հ/Հ	Բանկերի անվանումը	Ընդհանուր ակտիվները					Ընդհանուր պարտավորությունները					Ընդհանուր կապիտալը						
		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ	այդ թվում		Ընդամենը	աճ/ նվազ (%)	Գրավ- ված տեղը համա- կարգ	այդ թվում			
					Վարկ. ներդր- ումները	աճ/ նվազ (%)				Ֆիզ.անձ ժամկ. ավանդ	աճ/ նվազ (%)				Կանոն. կապի- տալը	աճ/ նվազ (%)	Կուտ. շահույթ	Զբաշ- ահույթ I եռ.
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
1	ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ Բանկ	174383.1	7.1	1	97518.7	3.7	138230.6	8.6	1	23320.7	13.3	36152.5	2.1	1	14567.2	0.0	13835.2	981.1
2	Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստ.	138776.5	2.2	2	82999.2	3.8	120781.2	1.8	2	33002.0	-0.9	17995.3	5.0	5	7556.6	0.0	10185.8	934.5
3	Արդշինհիմնվեստբանկ	118117.9	-1.1	4	48373.0	-13.1	90831.4	-1.4	6	30971.2	3.1	27286.5	-0.2	2	15513.6	0.0	8022.7	733.3
4	ՎՏԲ Հայաստան Բանկ	125572.3	4.0	3	81019.5	11.2	99752.7	4.5	3	19624.3	15.6	25819.6	2.1	3	13906.2	0.0	7888.5	669.6
5	Կոմվերս Բանկ	80037.1	1.4	8	48806.2	7.0	67399.0	0.9	8	14890.0	12.3	12638.2	4.1	10	1296.4	0.0	8744.8	624.3
6	Յոնիբանկ	105793.5	-2.6	7	66866.9	0.2	91756.2	-5.4	5	45625.7	0.3	14037.4	20.9	9	11400.7	32.6	3459.3	256.7
7	Հայէկոնոմբանկ	46664.6	-11.5	12	27744.6	-9.8	38483.5	-12.7	10	6371.4	3.5	8181.0	-5.2	16	2333.3	0.0	5418.7	-436.8
8	ԱՄԵՐԻՎԲԱՆԿ	110505.6	6.8	6	67731.1	-0.2	88216.7	7.9	7	17560.6	21.0	22288.9	2.6	4	18228.4	0.0	4178.8	533.7
9	Ինելիոբանկ	48280.5	-0.4	11	32126.7	14.2	37477.9	-2.2	11	9908.6	4.7	10802.6	6.2	11	2353.2	0.0	6689.9	456.5
10	Հայբիզնեսբանկ	115825.9	23.7	5	79045.0	30.9	99085.9	28.3	4	21260.4	19.8	16740.0	2.0	6	13450.0	0.0	3133.4	349.2
11	Անելիք Բանկ	50119.5	2.2	9	25859.1	2.2	34731.3	2.9	12	8541.6	16.0	15388.2	0.8	7	14300.0	0.0	1018.5	48.4
12	Առէկսիմբանկ	45648.6	17.0	13	25471.8	17.3	31556.5	26.2	14	9135.0	-2.6	14092.1	0.5	8	12347.3	0.0	1469.8	88.0
13	Արցախբանկ	49846.7	11.6	10	33138.3	7.1	41949.1	13.1	9	4905.7	18.2	7897.6	4.2	17	5561.2	0.0	1751.5	317.2
14	ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	41149.7	-0.5	14	19066.0	15.7	32967.9	-1.6	13	6268.1	68.7	8181.8	4.2	15	6128.0	0.0	1760.2	304.0
15	ԱրմՍվիսԲանկ	36631.3	23.3	15	11957.0	13.0	28210.5	30.3	15	2647.3	5.6	8420.8	4.4	13	7002.0	0.0	1284.9	272.6
16	Զարգ. Հայկական Բանկ	23539.6	9.1	17	15993.1	13.2	17144.5	11.9	16	7282.8	14.5	6395.0	2.3	20	4556.7	0.0	1488.3	262.7
17	Պրոմեթեյ Բանկ	25315.6	17.6	16	15502.7	47.8	15544.3	31.2	17	1559.5	21.0	9771.3	0.9	12	7200.0	0.0	2527.3	93.6
18	Կասկադ Բանկ	18047.4	-5.4	19	10533.8	-7.2	10351.6	-9.7	20	1326.6	0.4	7695.8	1.2	18	7248.9	0.0	178.1	120.8
19	Բիբլոս Բանկ Հայաստան	22044.4	25.3	18	16809.0	13.4	13712.7	48.9	18	2190.8	-2.9	8331.7	-0.6	14	8382.2	0.0	-66.8	-66.5
20	ԲՏԱ Բանկ	7821.4	-7.1	22	4052.1	-2.5	2623.6	-21.1	22	763.5	22.4	5197.8	2.0	22	6520.0	0.0	-1337.7	115.9
21	Պրոկրեդիտ Բանկ	17857.8	5.1	20	13492.8	6.5	12428.9	7.7	19	2929.7	26.0	5428.9	-0.4	21	6090.0	0.0	-661.0	9.0
22	Մելլաթ Բանկ	16234.8	30.2	21	6452.7	78.9	9086.5	34.3	21	16.1	3.2	7148.3	25.4	19	6850.0	24.5	219.3	97.9
	Ընդամենը	1418213.8	5.4		830559.3	6.7	1122322.5	5.9		270101.6	8.5	295891.3	3.2		192791.9	2.2	81189.5	6765.7